ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

2013թ. հունվարի 1-ից մինչ 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի աուդիտի իրականացման մրցույթի ծածկագիր HV-CS-2/2014

06 փետրվար, 2014թ.

Հայաստանի Հանրապետություն
Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագիր
Խորհրդատվական ծառայություն. Նվազագույն գնի վրա հիմնված ընրություն
ՎԶՄԲ վարկ №-8055-AM; Ծրագիր No P116748

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է Վարկ Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագիրը ֆինանսավորելու նպատակով և նախատեսում է գումարների մի մասն օգտագործել «2013թ. հունվարի 1-ից մինչ 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի արտաքին աուդիտի իրականացման» աուդիտորական ծառայություններ ձեռք բերելու համար:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է աուդիտորին հնարավորություն տալ կարծիք հայտնելու Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի (ՄՀՍԽ) կողմից հրապարակվող Միջազգային ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների (ՄՖՀՍ) հիման վրա կազմված՝ «Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի» 2013թ. հունվարի 1-ից մինչ 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Ծրագրի հաշիվների մատյանը ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքն է և այն կազմվում է ծրագրի հետ կապված ֆինանսական գործարքների արտացոլման նպատակով:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներառում են՝

ա) Ստացված գումարների ամփոփագիր՝ առանձնացված ձևով ներկայացնելով Համաշխարհային բանկից, ծրագրի շրջանակում այլ դոնորներից ստացված և պետական համաֆինանսավորման գումարները:
բ) Ծրագրի հիմնական բաղադրիչների և ծախսային կատեգորիաների մասով ծախսերի ամփոփագիր ընթացիկ տարվա և մինչ նշված ժամանակահատվածը կատարված ծախսերի մասով:
գ) Գումարների ստացման հայտերի ներկայացման համար օգտագործված ամփոփ հաշվետվությունների կամ ծախսային հաշվետվությունների ամփոփագիր:
դ) Նպատակային հաշվի քաղվածքներ:
ե) Ծրագրի կուտակված գումարները, բանկային մնացորդները և ծրագրի մյուս ակտիվներն ու պարտավորությունները, եթե այդպիսին գոյություն ունեն, արտացոլող հաշվապահական հաշվեկշիռ:
զ) Հաշվապահական քաղաքականության կարևոր դրույթները նկարագրող և այլ բացատրական տեղեկատվություն պարունակող ծանոթագրություններ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն սույնով հրավիրում է իրավասու աուդիտորական կազմակերպություններին (որոնք ներառված են Համաշխարհային Բանկի առ 27 հունվար 2014թ. Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի համար իրավասու Աուդիտորական Կազմակերպությունների ցանկում) ներկայացնելու ծառայությունների տրամադրման համար հետաքրքրության հայտ: Հետաքրքրված

աուդիտորները պետք է ներկայացնեն համապատասխան որակավորումը հավաստող տեղեկատվությունը (Աուդիտորական կազմակերպության մասին գրքույկներ, Միջազգային ֆինանսական ինստիտուտների կողմից ֆինանսավորվող ծրագրերի ներքո կատարված նմանատիպ աշխատանքների նկարագրությունը, նմանատիպ այլ աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն):

Կարճ ցանկի կազմման չափանիշներն են՝

- Կազմակերպության ընդհանուր փորձը /առավելագույնը 30 միավոր/
- Կազմակերպության փորձը ՄՖԻ-ի կողմից ֆինանսավորվող նմանատիպ ծրագրերում / առավելագույնը 70 միավոր /

Աուդիտորական կազմակերպությունն ընտրվելու է Համաշխարհային բանկի կողմից 2011թ. հունվարին հրապարակված «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցով սահմանված «Նվազագույն գնի վրա հիմնված ընտրության» մեթոդի համաձայն:

Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ աշխատանքային օրերին ժամը 09.00-17.30, զանգահարելով 37410-72-02-70: Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2014թ. փետրվարի 20-ը, ժամը 15.00:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0084,
Զորավար Անդրանիկի 1,
Պարոն Սահակ Աբրահամյանին
Հեռ: +37410-720010; Ֆաքս: +37410-720121;
էլ.հասցե hvenbec@gmail.com;